



Ն Ա Խ Ա Ք Ա Ն

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության 6-րդ հատորն ընդգրկում է պատմական Հայաստանի Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգների բնակավայրերի (այժմյան Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզ ու Կիրովաբադի շրջակա հայկական գյուղեր և Հայկական ՍՍՀ Շամշադինի, Իջևանի, Կարմիրի, Գիլիջանի շրջաններ) հեքիաթները: Այս առումով հեքիաթների ներկա հատորը օրգանապես շաղկապված է նախորդ 5-րդ հատորի նյութերի հետ, որոնք ընդգրկում են Լեռնային Ղարաբաղի շրջանների հեքիաթները:

Ներկա հատորում ուշագրավ են նշանավոր մանկավարժ ու հասարակական գործիչ Առաքել Բահաթրյանի (Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանների հետ միասին) 1860 թվականին Շուշի քաղաքում գրի առած հեքիաթները, որոնք մասամբ տպագրված, իսկ գլխավորապես անտիպ վիճակում պահպանվել են բաղմավաստակ բանահավաք-հեքիաթագիր Տիգրան Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» պրակներում և արխիվային ձևագիր հարուստ հավաքածուում: Բահաթրյանների գրառումները, շնայած իրենց պակասություններին, կարևոր արժեք են ներկայացնում հեքիաթագիտության համար, որպես հայկական հեքիաթների գրառման անդրանիկ նմուշներ: Հատորի նյութերի մեջ կարևոր են նաև 1880—1900-ական թվականներին ժողովված Խ. Շահնադարյանի (Ղազախի գավառ՝ Իջևան, Շամշադին Կարմիր), Հ. Մանասյանի (Գանձակի գավառ՝ Շամքոր-Չարդախու), Կ. Մեյիշ-Շահնադարյանի (Լեռնային Ղարաբաղ), ինչ-

պես և մեր օրերում բանահավաքներ Ս. Իսրայելյանի, Մ. Մխիթարյանի, Ա. Շահումյանի (Լեռնային Ղարաբաղ, Գանձակ), հավաքած հերթաթիւերը ներկա հատորում մեծ տեղ են զբաղեցնում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի բանահավաք Ա. Կարապետյանի 1958—1965 թթ. ընթացքում Իջևանի, Շամշադինի, Կարմիրի, Դիլիջանի շրջաններից հավաքած հարուստ նյութերը:

Հիշյալ բնակավայրերից կատարված հին և նոր գրառումները հնարավորութիւն են տալիս հետադոտելու հեթաթիւների տարածման, գոյատեւման և կրած փոփոխութիւնների պատկերը նույն պատմա-ազգագրական շրջանի սահմաններում, որը նույնպես կարեւոր նշանակութիւն ունի հեթաթիւագիտության և ընդհանրապես բանագիտության պատմության համար:

Արցախն ու Ուտիքը սերտորեն կապված են եղել միմյանց տնտեսապես ու քաղաքականապես և պատմական տարբեր ժամանակաշրջաններում ընդլայնել կամ նեղացրել են իրենց վարչա-տնտեսական սահմանները, հաճախ ներառելով նույն բնակավայրերը՝ անվանափոխված ու վերակազմած: Տնտեսական ու քաղաքական հարաբերութիւնների շնորհիվ հարեան այս երկու նահանգների բնակիչները պահպանել են լեզվա-բարբառային ու ազգագրական ընդհանուր շատ գծեր, որոնք արտացոլում են գտել նյութական ու հոգեւոր մշակութի, այդ թիւում և հեթաթիւների մեջ: Այդ պատճառով էլ Արցախի և Ուտիքի հեթաթիւները, ձևով ու բովանդակությամբ ընդհանրութիւն կազմելով, բնականաբար պետք է ներկայացվեն միասին:

Նախորդ հատորում Արցախի (Լեռնային Ղարաբաղի) մասին համապատասխան պատմա-ազգագրական տեղեկանքներ են տրվել: Ներկա հատորում ավելի հանգամանորեն կներկայացվեն Շուշին, Արցախ-Տավուշի (Գանձակի հայկական գյուղեր, Իջևանի, Շամշադինի, Կարմիրի շրջաններ) բնակավայրերը:

Շուշին իր կուլտուր-կրթական օջախներով խոշոր դեր է խաղացել հայ ժողովրդի մշակութային ու հասարակական կյանքում: Շուշին գտնվում է պատմական Արցախի Մյուս Հաբանդ (Վարանդա) գավառում, բարձրադիր լեռան լանջին: Լեռան հարավային կողմից անդնդախոր ձոր է, որի միջով հոսում է Քարինտակ գետակը: Շուշին հիմնադրվել է XVII դարում: 1752 թ. չիվանշիրցիների Փանահ խանը Վարանդայի Մելիք-Շահնազարյանների աջակցությամբ հիմնադրում է մի բերդ՝ Փանաբերդ:

Շուտով մոտակա Շոշի դյուղից այստեղ բնակություն են հաստատում հայ բնտանիքներ, և բերդը կոչվում է Շոշի կամ Շուշի:

Շուշին բաղմիցս ենթարկվել է պարսկական և օսմանյան բռնակալների հարձակումներին և հերոսաբար դիմադրել ու «յաշտսյանել» իր անկախությունը: 1795—1797 թթ. պարսից զորապետ Աղա Մահմեդ խանը մեծաթիվ զորքերով արշավում է Անդրկովկաս: Մի քանի անգամ նրա հարձակմանն է ենթարկվում նաև Շուշին, սակայն շուշեցիները Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդի և Մելիք-Քեկլարյան Մելիք-Աբովի գլխավորությամբ հերոսական դիմադրություն են ցույց տալիս ու «յաշտսյանում» հայրենի բերդաքաղաքը: 1813 թ. Գյուլիստանի դաշնագրով Ղարաբաղը, այդ թվում և Շուշին, անցնում է ռուսական տիրապետության տակ: 1826 թ. պարսկական Աբբաս Միրզա զորավարը մեծաքանակ զորքով Ղարաբաղը գրավելու համար արշավում է Վարանդա և պաշարում Շուշին: Ռուսական զորքերը հայազգի զորավար Մադաթովի գլխավորությամբ (որը Ղարաբաղի Ավետարանոց գյուղի ծնունդ էր) մեծ ջարդ են տալիս պարսկական զորքերին Գանձակի մոտ և հալածում երկրի սահմաններից դուրս: Դրանից հետո Շուշին կառավարվում է ռուսական իշխանության կողմից նշանակված դավառապետներով:

Իր աշխարհագրական դիրքով ու բնակչի մայական պայմաններով Շուշին դարձավ Անդրկովկասի ինքնատիպ քաղաքներից մեկը: Մեղմ ու բարեխառն կլիման, հարուստ անտառները, աղբյուրներն ու հանքային ջրերը Շուշին դարձնում են ամառանոցային քաղաք և դեպի Շուշի են ձգտում հայ մեծահարուստ ու առևտրական բնտանիքները: Կատարվում են շինարարական մեծ աշխատանքներ, կառուցվում են եկեղեցիներ, դպրոցներ և հասարակական այլ շենքեր: Աշխույժ առևտուր է ծավալվում Ռուսաստանի և արտասահմանի հետ:

Շուշիում եռանդուն գործունեություն է ծավալում նաև տեղի մտավորականությունը, որը հայ մշակույթի պատմությանը տվել է բազմաթիվ նշանավոր դեմքեր: Հիմնվում են տպագրաններ, լույս են տեսնում պարբերականներ և այլն: Պատահական չէ, որ հայկական հեքիաթների գրառման փորձերից մեներ տեղի է ունենում Շուշիում՝ Բահաթրյանների ձեռով: Շուշու բնակչության կազմը խառն է եղել. գոյություն են ունեցել հայկական և ադրբեջանական թաղամասեր: Հայերը իրենց բարբառով ու խոսվածքով նույնպես

միատարր չեն եղել (բուն Ղարաբաղի բարբառի հետ եղել են նաև Ահուլիսի, Մեղրու և այլ բարբառներով խոսող ազգաբնակչություն)։

Պատմական Ուտիքը վարչա-տեքստորիալ կազմով սերտորեն առնչված է եղել Արցախի հետ, և Արցախյան դաշտային գավառները հաճախ են մտել Ուտիքի մեջ։ Ուտիքն ու Արցախը, լինելով հարևան ու սահմանակից, ունեցել են պատմական նույն ճակատագիրը և հաճախ միասնաբար հանգես են եկել օտար նվաճողների ասպատակությունների դեմ։

Ուտիքն ընդգրկել է Գանձակի գավառի (այժմյան Ադրբեջանական ՍՍՀ Խանլարի, Դաշքյասանի, Շամքորի շրջանները) և Ղազախի գավառի շրջանները (այժմյան Հայկական ՍՍՀ Շամշադինի, Իջևանի, Կարմիրի, Դիլիջանի շրջանները)։ Պատմական տարբեր ժամանակաշրջաններում այս բնակավայրերը կրել են տարբեր անուններ՝ Գարդման, Փառխոս, Զավե (Սևորդյաց երկիր), Կայենո երկիր, Քուստի (Քավս), Շակաշեն, Տավուշ և այլն։ Այս շրջաններից մի քանիսը մտել են նաև Գուգարքի կազմի մեջ (Զորափոր՝ Կարմիրի և Դիլիջանի շրջաններ)։

Ուտիքը (ինչպես և Արցախը) դեռևս մ. թ. ա. II դարում, Արտաշես Ա թագավորի օրոք մտնում էր Մեծ Հայքի մեջ։ Որոշ ընդհատումներով այն անջատվում կամ միացվում է հայկական թագավորությանը և մինչև Արշակունյան հարստության անկումը ենթարկվում էր Սիսակյան Առան կուսակալին։ 387 թ. Ուտիքն անջատվում և միացվում է Աղվանից թագավորությանը։ Այնուհետև տարբեր ժամանակներում Ուտիքի որոշ գավառներ մերթ ընդ մերթ հայերը գրավում են և միացնում Հայաստանին։ IX—X դարերում հայոց Աշոտ Բ թագավորը Աղվանքից գրավում է Ուտիքի հյուսիսային գավառները։ IX դարում, ինչպես ամբողջ Հայաստանը, Ուտիքը ևս ենթարկվում է արաբական արշավանքներին և մտնում Բուղա զորավառի տիրապետության տակ։ XI—XII դարերում Ուտիքի գավառները ասպատակում են սելջուկ-թուրքերն ու ապա՝ թաթարները։

Ուտիքում խոշոր կուլտուր-պատմական դեր է խաղացել Գանձակ քաղաքը (Շակաշեն գավառում), որը հիմնադրվել է 836 թ.։ Գանձակը եղել է Աղվանից թագավորության մայրաքաղաք։ XI դ. սկզբին Գանձակը գտնվում էր Շեդդադինյան հարստության ձեռքին։ 1139 թ. քաղաքը մեծ ավերածություն-

ների է ենթարկվում երկրաշարժի հետևանքով: XII դարում Զաքարե և Իվանե սպասալարները հայկական և վրացական միացյալ զորքով մոտենում են Գանձակին, գրավում Գետարեկն ու Զարեքը. 1235 թ. Մուզանի դաշտից Գանձակի վրա են հարձակվում թաթարական հորդաները: XVI դարում օսմանցիների Օսման փաշան գրավում է Գանձակը, իսկ 1607 թ. պարսից Շահ-Աբբասը գրավելով Գանձակը անխնա սրի է անցկացնում այլազգիներին, քանդում է հին քաղաքը, շինում նորը և վերանվանում է Աբբասապատ ու քաղաքի կենտրոնում մի զեղեցիկ մզկիթ է կառուցում: Շահ-Աբբասը գրավում ու ավերում է նաև Շամքորը: Դրանից հետո Գանձակի գավառը կառավարում են պարսից շահի կողմից նշանակված խաները:

1721 թ. Գանձակի վրա են հարձակվում լեզգիները Ալիսուլթանի գլխավորությամբ: Գանձակեցիները օգնություն են խնդրում վրաց Վախթանգ թագավորից: Վերջինս մեծ զորքով արշավում, գրավում է Շամքորը, մտնում Գանձակ մեծ թվով հայեր է տանում Թիֆլիս, լեզգիների հարձակումը բազմիցս կրկնվում է, և կոտորածներն ու թալանը շարունակվում են:

1723 թ. օսմանցիների մեծաքանակ զորքը Ահմեդ Սուլթանի հրամանով հարձակվում ու գրավում է Գանձակը, Երևանն ու Դավթեժը: Այնուհետև իրար են հաջորդում պարսիկների արշավանքները և ամենից դաժան պարսից Աղա Մահմեդ խանի 1795 թ. հարձակումը Թիֆլիսի, Գանձակի և Արցախի, Գուգարքի ու Աղվանից երկրի այլ քաղաքների ու ավանների վրա, նրա կոտորածներն ու ավարառությունները:

1796 թ. ռուսական զորքը Զուբովի գլխավորությամբ (որին աջակցում էր հայոց Հովսեփ արքեպիսկոպոսը) առաջին անգամ հարձակվում է Գանձակի վրա, գրավում, բայց և շուտով հարկադրված թողնում այն: 1804 թ. ռուսները Ցիցխանովի գլխավորությամբ նորից գրավում են Գանձակը: 1826 թ. պարսից Աբաս-Միրզան մեծ զորքով հարձակվում է Շուշու, Գանձակի վրա, գրավում Գանձակ քաղաքն ու շրջակա ավանները, կոտորած ու ավեր սփռում ամենուր: Աբաս-Միրզայի դեմ են դուրս գալիս ռուսական զորքերը գեներալ Պասկևիչի և հայազգի զորավար Մադաթովի հրամանատարությամբ (Մանուկարյան Գրիգոր եպիսկոպոսի աջակցությամբ), գլխովին կործանում Աբաս-Միրզային և ազատագրում Շուշին ու Գան-

ձակը: Այդ օրվանից Գանձակը Պասկելի կողմից վերանվանվում է Ելիզավետպոլ:

Ուտիքի և Արցախի ազդաբնակչությանը մեծ աղետներ պատճառեցին նաև 1795—96 թթ. սովը և ժանտախտի համաճարակը: Մարդկային զոհերը մեծ չափերի հասան: Դրան միտյան և մասսայական տեղահանությունն ու գաղթականությունը: Գանձակից, Շուշուց և այլ ավաններից ու գյուղերից ընտանիքներով, թաղամասերով գաղթում էին Վրաստան, Պարսկաստան, Ռուսաստան, Հյուսիսային Կովկաս և այլուր:

Ղարաբաղի և Գանձակի մելիքությունները ռուսական իշխանությունից պահանջում էին ազատ տարածություններ: 1799 թ. ռուսաց Պավել կայսրը հատուկ հրովարտակով վրաց թագավորից պահանջ'ց մի շարք բնակավայրեր (Լոռու և Ղազախի շրջաններից) տրամադրել Ղարաբաղի և Գանձակի մելիքներին՝ վերաբնակվելու և իրենց տիրապետությունը հաստատելու: Ահա այս շրջանում է, որ վերաբնակեցվեցին Լոռու, Բուխսի, Ղազախի մի շարք գյուղեր ու ավաններ Ղարաբաղի և Գանձակի ազգաբնակչությամբ: Հին ու նոր տեղաշարժերը բավականին խայտաբղետ են դարձրել Ուտիքի և Արցախի ազգաբնակչության էթնիկական կազմը: Ինչպես հայտնի է, հնուց հայերի հետ բնակություն են հաստատել աղվաններ, ուտիներ, հետագայում՝ ադրբեջանցիներ, ռուս մալականներ և քրդեր: Հայ ազգաբնակչությունը ևս խաչաձևված է բազմաթիվ շերտերով: Միևնույն շրջանում կամ նույն գյուղում կան բնիկ տեղացի ազգաբնակչություն և տարբեր ժամանակներում ներգաղթած խավ: Այս հանգամանքը իր կնիքն ու ազդեցությունն է թողել բնակիչների լեզվի (բարբառի ու խոսվածքի) սովորությունների ու կենցաղի վրա: Այսպես յրինակ՝ Շամքորի շրջանի Բարսում գյուղի բնակիչները Անի քաղաքի հին գաղթականության շառավիղներն են, նյուկզար (Նուդզար) գյուղի բնակիչները Յիցիանովի ժամանակ ներգաղթել, հն. Երևանյան նահանգի Քանաքեռ, Ճաթղոան և Ճրովիդ դյուղերից, Զարդախու գյուղի բնակիչները 1823 թ. Թիֆլիսի Հավլաբար թաղամասից եկած երևանցիներ են, ինչպես և Ղարաբաղից ու Պարսկաստանից ներգաղթածներ: Դաշոյասանի շրջանի Բանանց, Քարհատ (Դաշբյասան), Խաչակապ (Կուշլի) գյուղերի բնակիչները բնիկներ են: Շամշադինի, Իջևանի, Կարմիրի շրջանների գյուղերի ազգաբնակչության մի մասը տեղաբնակ շերտ է եղել, մի մասը տարբեր ժամանակներում վերաբնակեցված

Ղարաբաղից, Շամքորից և այլ վայրերից: Օրինակ, Քարվանսարայի (այժմյան Իջևան) բնիկ տեղացիներին գերեվարել են Պարսկաստան, իսկ այժմյան բնակչությունը եկել է Երևանյան նահանգի Գյամրեղ, Արզնի, Քանաքեռ և այլ գյուղերից: Դիլիջանի բնակիչները ժամանակին տեղափոխված են եղել Իջևանի շրջանի Սև-Քար, Աշաջուր գյուղերից և Ղարաբաղից:

Ուտիքը Արցախի նման իր բնությամբ ու աշխարհագրական դիրքով Հայաստանի գեղեցիկ շրջաններից մեկն է: Նա ձգվում է Արաքսի և Ձորագետի միջև: Լեռնաշղթաներից ու լեռներից նշանավոր են Մրդուղը, Կայենի, ս. Գևորգի սարը, Բողբոխանը, Նալթոքյանը և այլն: Գեղատեսիլ են Ուտիքի անտառապատ հովիտներն ու դաշտերը, որտեղով հոսում են Կուր, Աղստև, Հախում, Տավուշ, Շամքոր, Գանձակ, Քարթառ (հնում՝ Տրտու), Արթինաջուր (Բանանց) և այլ գետեր ու վտակներ: Ուտիքը հարուստ է լեռնային սառնորակ աղբյուրներով ու հանքային բուժիչ ջրերով (Երկաթաջուր, թթու ջուր), ինչպես նաև մի շարք լճակներով (Ալհարկ, Տզրկածով՝ Գոշավանքի մոտ), Գյոկ-Գյոլ, Սուլուկնածով (Ջալի գյուղ) և այլն: Հարուստ ու բազմազան է Ուտիքի բուսական ու կենդանական աշխարհը: Հռչակված են անտառները բազմաթիվ վայրի և պտղատու ծառատեսակներով՝ կաղնի, հաճարի, հացենի, թխկի, բոխի, կոզենի, կարմրափայտ, փռնի, ծախ տանձի, զկռենի, սզնի, հոնի, թփերով՝ կլմրաստի (գերմաստի), թրղլի, մոշի, մոռի (ծմակամոշ), տկողնի (տխլի), ուտելի կանաչեղեններով՝ խաղաղ, կոմզուկ, սինդրիկ, սունկ (սոկոն), ծնեբեկ, փիփերտ, խնջլոզ, գինազոզ, շուշան, թրթնջուկ, ջրիկոտեմ, դաղձ, սամիթ, զանազան այլ խոտեր ու ծաղիկներ: Ընտանի և վայրի կենդանիներից Ուտիքում տարածված են՝ կովը, ոչխարը, այծը, ձին, գոմեշը, էշը, աղվեսը, նապաստակը, գայլը, առջը, վարազը, քարայծը, այծյամը, թռչուններից՝ բազեն (թավար-ղուշ կամ թառլան-ղուշ), կաքավը, բադը, փասյանը և այլն:

Հնուց ի վեր Ուտիքի տնտեսական հիմնական զբաղմունքներից է եղել երկրագործությունը, անասնապահությունը, այգեգործությունը, շերամապահությունը, արհեստներից՝ կավագործությունը, գորգագործությունը: Ուտիքում կան նաև հարուստ հանքեր (ոսկի, երկաթ, պղինձ, մարմար և այլն): Գտնվելով առևտրական բանուկ ճանապարհների հանգուցակետում, Ուտիքը աշխույժ առևտուր է ծավալել տարբեր երկրների հետ. արտահանվել են գյուղատնտեսական մթերքներ, մորթիներ, գործվածքներ (գորգ, կարպետ և այլն):

Ուտիքը հայտնի է նաև իր պատմական հուշարձաններով, որոնք Հայաստանի աչքի ընկնող հուշարձանների շարքին են դասվում, Նշանավոր վանքերից են՝ Գետիկի կամ Գոշ Մխիթարի վանքը, Մակարավանքը, Հաղարծինը, Դեղձնուտի, Կիրանցի, Կարմիր, Հարանց, Ջարեքա, Փառխոսի, Մյրդիկի կամ Քյուրխանա, Հոռոմաշենի կամ Կարմիր վանքերը, Թարգմանչաց կամ Բանանց անապատը, Մլղնարերդ կամ Մածնարերգ վանքը և այլն։ Ամրոցներից հայտնի են՝ Ղալաքյանը կամ Փառխոսը, Մամոտ բերդը, Ղալարոյունը, Ղըզղալան և այլն։ Պատմական-ճարտարապետական այս հուշարձանների մեծ մասը կառուցվել է գերադանցապես 12—13-րդ դարերում։

Արցախ—Ուտիլի հեքիաթներում յուրահատուկ ձևով անդրադարձում են գտել հայրենի բնությունն ու ժողովրդի նիստուկացը։ Կախարդական հեքիաթներում ականատես ենք ամենավաղագույն շրջանի հավատալիքների, պաշտամունքների ու սովորությունների վերապրուկներին։ Չնայած օտարերկրյա դաժան տիրապետության երկարամյա լծին, Արցախ—Ուտիքի հեքիաթներում պահպանված են մեր ժողովրդի ազատության ու անկախության պայքարի անկոտրում կամքը, սերնդից-սերունդ փոխանցված բարոյական բարձր ու վսեմ ավանդները։ Հեքիաթների մեջ, թեև այլաբանորեն ու հարևանցիորեն, տեղ են գտել պատմական ու քաղաքական իրադարձությունների արձագանքները։ Դրա ապացույցներից մեկն է պարսից Շահ-Աբբաս արքայի մասին հյուսված բազմաթիվ հեքիաթներն ու զրույցները, որտեղ ժողովրդական իմաստությամբ ու խորաթափանց ընդհանրացմամբ բնութագրված է հայ ժողովրդի պատմական ճակատագրի ասպարեզում բացասական դեր խաղացած արևելքի այդ ահեղ ու խորամանկ բռնակալի կերպարը։ Հեքիաթներում հաճախ են հանդիպում նաև կովկասյան լեռնաբնակ ցեղերը; որոնք ևս արշավել ու ասպատակել են հայկական գյուղերն ու ավանները։ Հեքիաթների մեջ հանդես են գալիս նաև ժողովրդի առողջ ու կենսալիկնդ երգիծանքն ու հումորը, որոնք նա գործադրում է սոցիալական, հասարակական ու կենցաղային աշատները օաղբելու և մերկացնելու համար։

Ներկա հատորի հեքիաթների լեզուն լեզվաբանության մեջ ընդհանուր ճանաչում գտած Ղարաբաղի բարբառն է՝ իր տար-

բեր ենթաբարբառներով ու խոսվածքներով: Բացի բուն Ղարաբաղի ներսում գոյություն ունեցող խոսվածքային զանազանություններից, կան աչքի ընկնող քերականական ու հնչյունաբանական առանձնահատկություններ Ղարաբաղի և Ուտիքի բնակավայրերի ենթաբարբառների ու խոսվածքների մեջ: Նկատելի են որոշակի զանազանություններ մի կողմից Ղարաբաղի բարբառի և Գանձակի ենթաբարբառի, իսկ մյուս կողմից Գանձակի և հարևան շրջանների՝ Շամքորի, Շամշադինի, Իջևանի, Կարմիրի շրջանների խոսվածքների միջև: Կան և միևնույն շրջանում կամ գյուղում խոսվածքային տարբերություններ, որոնք արդյունք են անցյալում ազգաբնակչության էթնիկական խմբերի տեղաշարժի ու խաչաձևման: Ուտիքի բնակավայրերի խոսվածքներում բնորոշ է Ղարաբաղի բարբառին հատուկ բաղաձայնների քմայնացումը և ձայնավորների փափկացումը: Բայց և միաժամանակ այդ խոսվածքներում քերականական-ձևաբանական որոշ ձևեր հակված են դեպի Արարատյան բարբառի (և ուրիշ խոսվածքի): օրինաչափությունները: Այսպիսով, ինչպես լեզվաբան-բարբառագետներն են դիտել, Ուտիքի բնակավայրերի ենթաբարբառներն ու խոսվածքները բոնում են Ղարաբաղի և Երևանի բարբառների միջտեղը: Նկատելի են այսպիսի մասնավոր զանազանություններ՝ 1) Գանձակի ենթաբարբառում բայի ներկայի վերջավորությունը ռւմ է մնում և ոչ թե ըւմ, ինչպես Ղարաբաղի բարբառում է (խոսում, պիրում և այլն): Միշարք միավանկ բառերում, որոնք Ղարաբաղի բարբառում գրաբարյան և վերջնահնչյունը պահում են (ծնկնը), Գանձակի ենթաբարբառը չի պահպանում (ծնկը): 2) Շամքորի, Շամշադինի, Իջևանի, Կարմիրի խոսվածքներում Ղարաբաղի բարբառի բացառական հոլովի ան վերջավորության (օր. տանան) փոխարեն պահպանվում է ից ձևը: Բայի հարկադրականի բեղի ֆյինամ և սահմանականի ֆյընըլալան ևմ (Ղարաբաղի բարբառ) ձևերի դիմաց գործածվում է ֆյընալ դեմ ձևը (Շամքոր, Շամշադին, Իջևան և այլն), և նման այլ բազմապիսի տարբերություններ ու զանազանություններ:

Հատորում ընդգրկված բնագրերը հավակնություն չունեն բարբառների քերականական-ձևաբանական և հնչյունաբանական առանձնահատկություններն ու նրբությունները լրիվ չափով պահպանելու: Մասամբ դա գալիս է բանահավաք-գրա-

ռողնների (մասնավորապես նախահեղափոխական շրջանում) աշխատանքի մակարդակից, մասամբ էլ իրենց իսկ հեթաբարբառների ու խոսվածքների խառն վիճակից: Պահպանելով բանահավաքների հաղորդած բնագրերի քերականական-հնչյունաբանական ընդհանուր վիճակը, փորձ է արված, այնտեղ, որտեղ դա հնարավոր է, տառադարձության ու առանձին նշանների միջոցով հաղորդել բարբառային արտասանական յուրահատկությունները:

Ինչպես նախորդ հատորներում, այս հատորում ևս պահպանված են «Հայ ժողովրդական հեթաթների» գիտական հրատարակության համար ընդունված բնագրագիտական ընդհանուր սկզբունքները:

1. Պահպանվում է հեթաթների պատումների ամբողջականությունը: Բնագրերի նկատմամբ խմբագրական որևէ փոփոխություն (հապավում, հավելում և այլն) չի կատարված: Ասացողների «սխալները»՝ սյուժետային գծից խոտորումներ, դեպքերի, դեմքերի, թվերի շփոթում և այլևայլ անհամաձայնություններ, չեն ուղղված, բայց դրանց մասին նշվում է ծանոթության կարգով: Հեթաթների վերնագրերը թողնված են այնպես, ինչպես սկզբնաղբյուրներում են, իսկ անվերնագիր լինելու դեպքում՝ վերնագրերը նշանակվում են և այդ մասին նշվում ծանոթության կարգով:

2. Հեթաթների լեզուն չի փոփոխված, այսինքն թողնված է այնպես, ինչպես գրի է առել բանահավաքը բանասացներից, պահպանելով, սակայն, նոր ուղղագրությունը: Նույն բանասացի հաղորդած բնագրերում հանդիպող միևնույն բառերի տարբեր գրությունները դարձվում են միօրինակ, հենվելով բարբառագիտական ճշգրիտ ձևի վրա:

3. Ճշգրտված և ուղղված են բնագրերի տրոհության և առոգանության նշանները, պարբերությունների և երկախոսությունների բաժանումը, ուղղակի և անուղղակի խոսքերի կիրառումները:

4. Բացի հատուկ անուններից, բնագրերում մեծատառով են գրված նաև կենդանական ու բուսական աշխարհի առանձին ներկայացուցիչների անունները, որոնք հեթաթներում հանդես են բերվում որպես գործող հերոսներ, ինչպես նաև բոլոր հերոսներին տրված մականունները:

5. Սկզբնաղբյուրներում հանդիպող՝ բանահավաքների ընդ-
միջարկումները (բառերի ու արտահայտությունների բացա-
տրություններ, առանձին դեպքերի ու դրվագների մեկնաբա-
նություններ և այլն) առանձնացված են բուն բնագրից և
տրված են էջատակում՝ համապատասխան ծանոթագրությամբ:

6. Բոլոր տեսակի ճշգրտումների, բացատրությունների ու
ծանոթագրությունների դեպքում նշված են համառոտագրու-
թյուններ՝ Մ. Բ. (ծանոթություն բանահավաքի), Մ. Կ. (ծանո-
թություն կազմողի), Մ. Ա. (ծանոթություն ասացողի):

Այս ընդհանուր սկզբունքների ու կանոնների կիրառմանը
զուգընթաց հաշվի են առնված հատորի նյութերի առանձ-
նահատկությունները:

«Հայ ժողովրդական հեքիաթների» 6-րդ հատորը ըստ
կառուցվածքի ներկայացնում է հետևյալ պատկերը:

Հիմնական բնագրերի բաժնում հեքիաթները ներկայացված
են երկու հիմնական խմբով՝ Ղարաբաղ և Գանձակ—Տավուշ:
Այսպիսի խմբավորում կատարելով՝ նպատակ ենք ունենել
նեղ սահմաններում ևս պահպանել նյութերի ազգագրական-
տեղագրական և լեզվա-գեղարվեստական միասնությունն ու
ամբողջականությունը: Հիշյալ երկու խմբերի ներսում հեքիաթ-
ները դասակարգված են ըստ բնույթի՝ կախարդական (հրա-
շապատում), արկածային, կենցաղային (իրապատում), կեն-
դանական-առակատիպ և երգիծական-գրուցատիպ:

Հավելված բաժնում զետեղված են այն նյութերը, որոնք
հեքիաթի ժանրին ձուլված զրույցներ, լեգենդներ ու ավան-
դություններ են և արդեն կորցրել են իրենց ժանրային կեր-
պարանքը: Այստեղ տեղ են գտել նաև այն հեքիաթները,
որոնք բովանդակության ու գեղարվեստական-արտահայտչա-
կան տեսակետից լիարժեք չեն և կամ աննշան փոփոխու-
թյամբ հիմնական բնագրերի տարբերակներ են: Այս հատո-
րի հավելվածում ներկայացված է նաև վերջին տարիներս գրի
առնված հայկական ժողովրդական վեպի «Սանասար Բաղդասար»
պատումը, որը հեքիաթային բնույթ ունի:

Մանրագրությունների մեջ հերթականությամբ լուսաբան-
վում է հատորում տեղ գտած բոլոր հեքիաթների գրառման պատ-
մությունը:

Բառարանն ընդգրկում է հատորում տեղ գտած, բարբա-
ռային դժվար հասկանալի և փոխառյալ բառերի բացատրու-
թյունները:

Յանկերը այբբենական կարգով ներկայացնում են հատո-
րում ընդգրկված հեքիաթները՝ ըստ տեղի և ասացողների:
«Հայ ժողովրդական հեքիաթների» 6-րդ հատորի բնագրե-
րի պատրաստման և բառարանի կազմման աշխատանքներին
մասնակցել է Մ. Ն. Առաքելյանը (Լեոնային Ղարաբաղի հեքիաթ-
ների բաժին):